# ««ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ» ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ և ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

-Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի N 1215-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

*Հայաստանի Հանրապետության կառավարաության 2018 թվականի նոյեմբերի 1-ի ««Ինժեներական քաղաքի» ստեղծման հայեցակարգը և հայեցակարգից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» N 1215-Լ որոշման հավելված N 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:*

**Հավելված**

**Հայաստանի Հանրապետության**

**կառավարության 2019 թվականի**

**N -Լ որոշման**

**Հավելված N 2**

**Հայաստանի Հանրապետության**

կառավարության 2018 թվականի

նոյեմբերի 1-ի N 1215-Ն որոշման

**Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց**

**«ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ» ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ**

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը |
|---|---|---|
| 1. | «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի շրջանակում ամբողջական առաջարկի հաստատում | Համաշխարհային բանկի ընթացակարգերին համապատասխան ընտրված ամբողջական առաջարկի առկայություն |
| 2. | «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի իրականացման համար հողի սեփականության իրավունքի փոխանցում Երևանի քաղաքապետարանից Հայաստանի Հանրապետությանը | «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ հողի սեփականության իրավունքի առկայություն |
| 3. | **Հավաստագրման հանձնաժողովի ստեղծում և լիազորությունների սահմանում ՀՀ կառավարության որոշմամբ** | Ինժեներական քաղաքում ռեզիդենտի կարգավիճակ ստանալու համար ներկայացված հայտերի քննարկման և որոշումների ընդունման լիազորություններ ունեցող **հավաստագրման հանձնաժողովի** առկայություն |

| | | |
|---|---|---|
| 4. | «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի շրջանակում հողի բարեկարգման աշխատանքների իրականացման նպատակով նախագծային կազմակերպության ընտրություն | «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի շրջանակում հողի բարեկարգման աշխատանքների իրականացման նպատակով նախագծային կազմակերպության ընտրություն |
| 5. | «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի շրջանակում ինժեներական բիզնես աքսելերատորի շենքի կառուցման նպատակով նախագծային կազմակերպության ընտրություն | «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի շրջանակում ինժեներական բիզնես աքսելերատորի շենքի կառուցման նպատակով նախագծային կազմակերպության ընտրություն |

| | | |
|---|---|---|
| 6. | «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի շրջանակում հողի բարեկարգման աշխատանքների իրականացման համար շինարարական կազմակերպության ընտրություն և աշխատանքների մեկնարկ | «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի շրջանակում հողի բարեկարգման աշխատանքների իրականացման համար շինա-րարական կազմակերպության առկայություն և աշխատանքների մեկնարկի ապահովում |
| 7. | «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի շրջանակում ինժեներական բիզնես աքսելերատորի շենքի շինա-րարության իրականացման համար շինարարական կազմակերպության ընտրություն և աշխատանքների մեկնարկ | «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի շրջանակում ինժեներական բիզնես աքսելերատորի շենքի շինարարության իրականացման համար շինարարական կազմակերպության առկայություն և աշխատանքների մեկնարկի ապահովում |
| 8. | «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի շրջանակում հողի բարեկարգման աշխատանքների իրականացում | «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի շրջանակում հողի բարեկարգման աշխատանքների իրականացման ապահովում |
| 9. | «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի շրջանակում ինժեներական բիզնես աքսելերատորի շենքի շինարարության իրականացում | «Ինժեներական քաղաքի» ստեղծման ծրագրի շրջանակում ինժեներական բիզնես աքսելերատորի շենքի շինարարական աշխատանքների իրականացման ապահովում |